

դէսս Երէջ Համադասփեան Ոսկանի մասին մատնիչի դեռ կատարած է Լատին իշխանութեանց քով թէ Հոռոմ եւ թէ Մարսիլիա: Բնական է որ այս երկուքին վկայութիւնները ոչինչ կ'արժեն, իրենց անպարկեշտ նկարագրին իսկ պատճառաւ: Անոնք կրնային որեւէ բանի համար վկայութիւն տալ միայն թէ իրենց շահասիրական ակնկալութեանց գոհացում տրուէր:

Սակայն տեսնենք թէ Յակոբ Զուգայեցին ի՞նչ պայմաններու եւ վիճակի մէջ կը գտնուէր այս դաւանագիրը իբր թէ ստորագրած ատեն:

Մեզի հասած է խիստ կարեւոր վաւերագրութիւն մը պատրաստուած եւ զրուած «ՌՃԻԹ» (1680) օգ(ոստոս) Ժ. (10) ի ստ(ա)մպօլ ք(ա)ղ(ա)քի, նուաստազոյն ծառայից քոյ գրիս պ(ատ)ճ(ա)ռքն այսօքիկ դայսէրցի Գրի(գոր) վ(ա)րդ(ա)պ(ետ): Եւ ա(ստու)ծատուր վ(ար)դ(ա)պ(ետ)», ուղղեալ Եղիազար Այնթապցիի: Գրութեանս հնագոյն օրինակը կը գտնուի Երուսաղէմի մեր վանքին թիւ 184 զրչապի ժողովածուին մէջ: Իմ հաւաքածոյիս մէջ ալ ունիմ օրինակութիւն մը կատարուած Սաւալանեանցէ 1893ին 60 մեծ էջնոց տետրակի մը մէջ, ուր արտագրուած են 1655-1680 թուականներու Նամակներ եւ Կոնդակներ: Այս վաւերագրութիւնը ամբողջութեամբ հրատարակած է Նորայր Եպ. Պողարեան Երուսաղէմի Մայր Յուցակին Բ. հատորին մէջ, էջ 163-165:

Այս վաւերագրութիւնը իր ամբողջութեամբ կարեւոր յիշատակարան մըն է զոր անհրաժեշտ կը սեպեմ հրատարակել: Կ'արտագրեմ ուղղակի Պողարեան Եպ. ի հրատարակութիւնէն:

Թ. 59ա.— Այս գիրս յաղագս Յակոբ Կաթողիկոսին առ Ած. փոխելոյն առաքեալ եղեւ առ Եղիգար Կաթողիկոսն.— Մեծի եւ տիեզերափառ երջանիկ Հայրապետի Տեառն Եղիազարու Կաթողիկոսին ամենայն Հայոց երկրպագութիւն մատուցի նուաստ ծառայից:

Յայտարարութիւն համառօտ կերպիւ նարդեանս դիպուածոյ, յորում պատահեցաւ մեզ անբախտ վերջացեալ ծառայից մեծութեանդ. քանզի զիտեմ իսկապէս

յառաջագոյն լուեալ քո զամենայն անցս մեր՝ թէ ո՞րպէս հնարիւք եւ զափուղուլով ի Տիգրանակերտու բռնաբարեալ զարձուցին զՎեհս մեր ի Ստամպօլ, եւ թէ՛ ո՞րքան երկունս կրեաց աստ ի քաղաքիս թէ՛ ընդ Սոսրովին եւ թէ՛ ընդ հակառակորդաց վրդպտին Մարտիրոսին, զոր ահն ունէր եզերիլ բանիցն եւ ապա գրել առ Սրբութիւնդ: Վասն որոյ ոչ գրեցաւ առ մեծութիւնդ իրակութիւն անցելոց բանից դիպուածոց անբախտութեանս: Իսկ յետ տօնի ած. այսպսոնութեան ցաւ իմն դիպեցաւ փորոտեաց Վեհիս մեծի եւ մինչեւ յերեք ամիսն հազիւ առողջութիւն եզիտ եւ զայն ոչ իսկապէս, զի թէպէտ կայր յառողջութեան, սակայն ի շարթու միանգամ կամ երկու աւուրքք ցաւազնիւր ի փորոտեացն, մինչեւ եհաս յուլիս ամսոյ իէ. յորում աւուր յուսկուտարն լինելով, ի չորեքշաբթու հիւանդացեալ ի ցրտութենէ օգոյ, տաղնապ ջերմութեան սաստիկ ըմպունեալ, մինչեւ զիտել ինքեան զելն իւր յաշխարհէ: Ասաց մեզ գրել քաղաքին դալ առ ինքն եւ պատուիրել զոր ինչ ասելոցն էր: Իսկ իբրեւ եկին ամենեքեան երեւելիք, որք յարեւմտից եւ որք յարեւելից, եւ ասաց նոցա անդարձ կտակի, որոց յունկն ամենից լուաւ: Բայց մեծամեծք քաղաքիս խնդրեցին ի սրբոյ հօրէն դառնալ ի քաղաքն, յորոց ճեղքեալ յերկուս՝ ոմանք ի սբ. Ած. ածինն եւ ոմանք ի Ղալթիայ, յորոց բռնաբարութենէ բաղմաց մուծին ի Ստամպօլ յաւուր շարթու: Եւ յայնմ աւուր երեկոյի արձակեաց զամենայն կապեալն եւ զբանադրեալն յինքնէ եւ օրհնեաց զժողովուրդն եւ յանձն արար զինքն քեզ՝ ասելով. նա հոգասէ զԱթոռն սուրբ, զի մի՛ աւերեսցի ի հակառակորդաց: Իսկ յաւրն կիրակէի թէ ո՞րքան դառնութիւն հասուցին յայնմ հիւանդութեան շարճճիկը ոմանք, զորս յետոյ մի ըստ միովէ պատմելոց եմք: Բայց յերկրորդում աւուր օգոստոսի ամսոյ յերկուշաբթով յերկու ժամու աւանդեաց զքաղցր հոգին առ Տէր, մինչ անկեալ կայր ի վերայ բազկաց մերոց: Սբ. Հայրապետն Յակոբ դնաց առ անցկալին իւր Քս. եւ սուղ մեծ անտանելի եթող մեզ, ողբացեալ եւ ողորմելի մնացեալ